ԲԱՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն – էջ 1
2. ՀՀ ֆիզիկաաշխարհագրական դիրքը – էջ 1
3. ՀՀ տնտեսաաշխարհագրական դիրքը – էջ 8
4. ՀՀ քաղաքաաշխարհագրական դիրքը- էջ 9
5. Եզրակացություն – էջ 10

Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքը

Երկրագնդի վրա կա անկախ և ինքնիշխան շուրջ 200 պետություն, որոնք, ի թիվս այլ հատկանիշների (զբաղեցրած տարածքի մակերես, բնակչության թվաքանակ, պետական կարգ և կառուցվածք, տնտեսական զարգացվածության մակարդակ և այլն), միմյանցից տարբերվում են նախ և առաջ իրենց աշխարհագրական դիրքով:

Յուրաքանչյուր երկիր, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության, աշխսրհագրական դիրքի մասին ամբողջական պատկերացում ունենալու համար պետք է այդ երկիրը դիտարկել ֆիզիկաաշխարհագրական, տնտեսաաշխարհագրական և քաղաքաաշխարհագրական տեսանկյուններից:

Ֆիզիկաաշխարհագրական դիրքը: Հայաստանի Հանրապետությունը (Հայաստանը կամ ՀՀ-ն) գտնվում է Եվրասիա մայրցամաքի Ասիա աշխարհամասում, Հարավ-արևմտյան Ասիա ենթացամաքի մաս կազմող Հայկական լեռնաշխարհ տարածաշրջանի հյուսիս-արևելքում: Հայաստանի Հանրապետությունն իր տարածքով տասնապատիկ անգամ փոքր է պատմական Հայաստանից:

Տարածքը եզրավորված է հյուսիսային լայնության (հս.լ.)$38^0$50-$41^0$18 զուգահեռականներով և արևելյան երկայնության (արլ. է.)$43^0$27-$46^0$37 միջօրեականներով, իսկ դա նշանակում է, որ Հայաստանի Հանրապետությունը գտնվում է Արևելյան կիսագնդում, III ժամային գոտում, Հյուսիսային կիսագնդի բարեխառն ջերմային և լուսավորվածության գոտիներում, մերձարևադարձային կլիմայական գոտու Միջերկրածովային կլիմայական մարզում:

Զբաղեցնում է Կուր-Արաքսյան լեռնային միջագետքի մի հատվածը, որը սեղմված է Իրանական բարձրավանդակի (հարավ-արևելքից), Փոքր Կովկասի լեռնաշղթաների (արևելքից և հյուսիսից) և Հայկական հրաբխային բարձրավանդակի (արևմուտքից) միջև:

Գտնվելով Ալպ-Հիմալայան գեոսինկլինալի գրեթե կենտրոնում և չունենալով ծովային սահմաններ՝ մեր հանրապետության տարածքը Սև ծովից ուղիղ գծով հեռու է 165 կմ, Կասպից ծովից՝ 190 կմ, Միջերկրական ծովից՝ 750 կմ, իսկ Պարսից ծոցից՝ ավելի քան 1000 կմ: Կարևոր գործոն է նաև ռելիեֆը:

Տարածքն ունի հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ձգվածություն և այդ ուղղությամբ էլ աստիճանաբար նեղանում է: Ամենանեղ մասում՝ ծայր հարավ-արևելքում, դրա լայնությունը հազիվ հասնում է 40 կմ-ի, մինչդեռ ամենալայն՝ կենտրոնական մասում՝ ավելի քան 200 կմ-ի: Տարածքի ամենամեծ ձգվածությունը 360 կմ է:

Հայաստանի Հանրապետությունը սահմանակից է 4 պետությունների՝ Վրաստանին, Ադրբեջանին, Իրանին և Թուրքիային: Պետական սահմանի ընդհանուր երկարությունն ավելի քան 1400 կմ է, որի ամենաերկար հատվածը Ադրբեջանի հետ է:

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան մասում է գտնվում եզրային ծալքաբեկորավոր լեռների և հրաբխային միջնաշխարհի մի հատվածը՝ 29743 կմ² տարածքով, որի 2%-ն ունի մինչև 800մ բարձրություն, շուրջ 60%-ը՝ մինչև 2000մ, 38%-ը 2000 մետրից բարձր է և անբարենպաստ՝ տնտեսական գործունեության համար: Մեծ են բացարձակ բարձրությունների տարբերությունները, ամենաբարձրը՝ քառագագաթ Արագածն է՝ 4090մ, ամենացածրը՝ Դեբեդ գետի ստորին հոսանքի շրջանում՝ 375մ: Հայաստանի Հանրապետության տարածքի 18%-ը հարթավայրեր են, 80%-ը՝ լեռներ: ՀՀ տարածքի միջին բարձրությունը 1830 մ է: Բնական պայմանների և երկրաբանական կառուցվածքի մեծ բազմազանությունից ելնելով՝ տարածքում առանձնացվում են 4 լեռնագրական մարզեր.

ՀՀ ԼԵՌՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մասշտաբ 1:2 000 000

Սահմաններ

- մարզերի
- ենթամարզերի

Լեռնագրական մարզեր

I Հյուսիսային ծալքաբեկորավոր լեռնաշղթաների և միջլեռնային գոգավորությունների

- **Ա** Արտաքին լեռնաշղթաների ենթամարզ
- **Բ** Ներքին լեռնաշղթաների և միջլեռնային գոգավորությունների ենթամարզ

II Հրաբխային լեռնավահանների և սարավանդների

- **Ա** Աշոցք - Ջավախքի ենթամարզ
- **Բ** Արագած - Սյունիքի ենթամարզ

III Հարավային ծալքաբեկորավոր լեռնաշղթաների և միջլեռնային գոգավորությունների

- **Ա** Ուրծ - Վայքի ենթամարզ
- **Բ** Զանգեզուրի ենթամարզ

IV Միջինարաքսյան գոգավորության Արարատյան ենթամարզ

Բարձրությունների սանդղակ մետրերով

ցածր 500 1000 1500 2000 2500 3000 բարձր



<u>Հյուսիսային և հյուսիսարևելյան ծալքաբեկորավոր լեռնաշղթաներ</u>Հյուսիսային և հյուսիսարևելյան ծալքաբեկորավոր լեռնաշղթաների մարզը Փոքր Կովկասի կենտրոնական հատվածն է, ձգվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք: Ծայր հյուսիսում <u>Վիրահայոց լեռնաշղթան</u> է, որից հարավ, գրեթե զուգահեռականի ուղղությամբ, ձգվում են Բազումի, Հալաբի լեռնաշղթաները, վերջինիս շարունակությունը դեպի հս.՝ Դեբեդ և Աղստև գետերի միջև Տ-աձև ձգվող <u>Գուգարաց լեռնաշղթան</u> է՝ Սևորդյաց, Իջևանի, Ոսկեպար, Մթնասար լեռնաճյուղերով: <u>Բազումի լեռնաշղթային</u> զուգահեռ, <u>Զաջուռի</u> լեռնանցքից մինչև <u>Սևանի լեռնանցք</u>, ձգվում է Փամբակի լեռնաշղթան, որից հվ-արլ. ճյուղավորվում է Ծաղկունյաց լեռնաշղթան, նրա յարևանությամբ անտառային բնության գրկում <u>Ծաղկաձոր</u> ամառանոցային քաղաքն է: Սևանա լճի հս.-արլ. ափի երկայնքով տարածվում է Արեգունու լեռնաշղթան, որին հաջորդում է <u>Սևանի լեռնաշղթան</u>, ապա հվ-արլ. ուղղությամբ՝ Արևելյան Սևանի լեռնաշղթան: ՀՀ հս-արմ-ում՝ Ախուրյանի հովտից մինչև <u>Փամբակի</u> հովիտը, <u>Շիրակի</u> լեռնաշղթան է, որը Բազումի, Փամբակի, Արեգունու, Սևանի և Արևելյան Սևանի լեռնաշղթաների հետ կազմում է ընդհանուր ջրբաժան՝ լեռնագրական միավոր՝ 310/ երկարությամբ: Այս խոշոր ջրբաժանը ֆիզիկաաշխարհագրական սահման է Արաքսի ավազանի չոր ցամաքային և Կուրի ավազանի համեմատաբար խոնավ լանդշաֆտային համալիրների միջև: Արեգունու լեռնաշղթայից Գետիկի մհովտով բաժանվում է Միափորի լեռնաշղթան, որից ճյուղավորվում են Կենաց, Հախումի, Տավուշի, Խնձորուտի ոչ բարձր լեռնաշղթաները, որոնք ջրնաժան են համանուն գետերի և Աղստևի միջև:

Հրաբխային լեռնազանգվածներ

Հրաբխային լեռնազանգվածների ու սարավանդների մարզը ՀՀ տարածքի մոտ 45%_Ն է՝ սկսվում է հս-արմ-ից՝ Եղնախաղի և Ջավախքի լեռնաշղթաներով, փգվում հվ., ապա հվ-արլ.՝ ընդգրկելով Արագած և Արայի լեռ լեռնազանգվածները, Գեղամա լեռնավահանը, Վարդենիսի լեռնաշղթան, Սյունիքի բարձրավանդակը: Մարզը բնութագրվում է լավային սարավանդներով, բազմաթիվ հրաբխային կոներով, թույլ մակերևութային հոսքով:

Հրաբխային ռելիեֆի կարևոր ձևերից են արտաժայթուք կոները՝ առանց խառնարանի հրաբուխները, թթվային լավան, դուրս մղվելով,կուտակվել է երկրի մակերևույթին՝ առաջացնելով զառիթափ լանջերով կոներ կամ լեռնազանգվածներ. այն լավ արտահայտված է Ապիտակասար, Վարդենիս, Մեծ Իշխանասար լեռնագագաթներում: Ծագումնաբանական տեսակետից այս մարզը խիստ տարբերվում է ՀՀ ծալքաբեկորավոր լեռների համակարգից: Տիրապետում են խիստ ծակոտկեն ու ճեղքավորված ջրաթափանց ապարները, և անգամ տեղատարափ անձրևների դեպքում մակերևութային հոսք հազվադեպ է ձևավորվում:

Հարավային ծալքաբեկորավոր լեռնաշղթաներ Հարավային ծալքաբեկորավոր լեռնաշղթաների մարզն ունի խիստ մասնատված մակերևույթ, խոր հովիտներ ու կիրճեր, սրակատար լեռնագագաթներ: Ամենախոշոր լեռնագրական միավորը Զանգեզուրի լեռնային համակարգն է՝ Վայքի, Բարգուշատի, Մեղրու լեռնաշղթաներով և նրանց բազմաթիվ լեռնաճյուղերով, առանձին լեռնագրական միավոր է Խուստուփի-Կատարի աղեղնաձև լեռնաշղթան:

Միջլեռնային իջվածքներ ու գոգավորություններ

Միջլեռնային իջվածքներն ու գոգավորությունների մարզ, լեռնաշղթաների միջև տարածվում են միջլեռնային գոգավորությունները, որոնց հատակի հարթ տեղանքը հայ ժողովուրդը ավանդաբար դաշտ է անվանել: Առավել խոշոր միավորը Արարատյան գոգավորությունն է. վերջինիս հատակում Արարատյան դաշտն է՝ ծածկված անթրոպոգենի հզոր՝ մինչև 500լ/ հաստության լճագետային նստվածքներով:

ՀՀ արլ-ում Սևանի գոգավորությունն է. հատակում՝ Սևանա լիճը: Նշանավոր են նաև Լոռու,Շիրակի,Ապարանի, Մասրիկի դաշտերը: Լոռու դաշտում գետի քայքայիչ աշխատանքի հետևանքով գոյացել է գեղատեսիլ Դեբեդի հովիտը, որը թողնում է երկհարկանի հովտի տպավորություն (առավել խորությունը՝350մ): Այստեղ ամենուրեք խոր կիրճեր են, դարավանդներ,ժայռեր ու կատարներ,բլուրներ՝ ծածկված սաղարթախիտ անտառներով, ծաղկավետ մարգագետիններով:Զորի հատակին ոլորապտույտ Դեբեդն է:

Կլիման ՀՀ կլիմայաստեղծ գործոնները բազմազան են, որոշիչ նշանակություն ունեն աշխարհագրական դիրքերը, լեռները, համակարգերը (Մեծ և Փոքր Կովկասներ, Հայկական լեռնաշխարհ), արաբական անապատների, Սև և Կասպից ծովերի, ինչպես նաև Իրանական ու Փոքրասիական բարձրավանդակների հարևանությունը: ՀՀ տարածքը գտնվում է մերձարևադարձային գոտու հյուսիսային լայնություններում և բնութագրվում է չոր ցամաքային կլիմայով, կլիմայական հակադրություններով ու տարվա 4 եղանակների առկայությամբ:

Քամիները

ՀՀ տարածքին բնորոշ է քամու փոփոխական ռեժիմը: Տարվա ընթացքում գերիշխում են հիմնականում արևմտյան օդային հոսանքները: Սակայն լեռնային ռելիեֆի պայմաններում, հատկապես ցածրադիր վայրերում, օդային հոսանքները շեղվում են իրենց նախնական ուղղությունից: Օդային հոսանքների արևմտյան ուղղությունը շուրջ տարին պահպանվում է միայն 2500-3000 մետրից բարձր լեռներում: ՀՀ տարածքին բնորոշ են բրիզը, ֆյոնը և լեռնահովտային քամիները: Բրիզն առաջանում է հիմնականում անտիցիկլոնային պարզ եղանակներին՝ Սևանա և Արփի լճերի, Ապարանի և մյուս խոշոր ջրամբարների ափերին: Սևանա լճի ավազանում (հատկապես՝ Մասրիկի դաշտում) դիտվում է ապրիլ-հոկտեմբերին: Լճերից փչող բրիզի արագությունը մինչև 1,8 մ/վ է, ցամաքից փչողինը՝մինչև 2,4մ/վ(լեռնային քամու ազդեցությամբ): Ֆյոնը բնորոշ է Աղստրի հովտին, Սևանա լճի ավազանին (հատկապես՝ Գավառի շրջակայքում) և Զանգեզուրին: Այն առավել ցայտուն է արտահայտված Սևանա լիճ-Աղստևի հովիտ հատվածում, որի ազդեցությամբ

Դիլիջանում և Իջևանում ձմռանն օդի հարաբերական խոնավությունն ավելի ցածր է, քան ամռանը: Եղել են դեպքեր, երբ մի քանի ժամվա ընթացքում ֆյոնի հետևանքով օդի ջերմաստիճանը բարձրացել է 15-20^{0}C-ով: Եթե դա տեղի է ունենում վաղ գարնանը, լեռներում սկսվում է բուռն ձնհալ, որի հետևանքով սկսվում են գետերի աղետաբեր հորդացումներ: Լեռնահովտային քամիները ՀՀ-ում դիտվում են գրեթե ամենուր, (հատկապես՝ ամռանը պարզկա եղանակին: Լավ արտահայտված են Արարատյան գոգավորությունում, դիտվում են ամբողջ տարվա ընթացքում, ուժեղանում հունիս-սեպտեմբերին, արագությունը՝ 3-20մ/վ, իսկ հովտային քամին սկսվում է առավոտյան. կեսօրին արագությունը հասնում է առավելագույն արժեքին: Երեկոյան (մոտավորապես ժամը 18-19-ին) սկսվում է լեռնային քամին, որը ժամը 22-23-ին հասնում է առավելագույն արագության: Երևանում սկսվում են մայրամուտից առաջ՝ ժամը 16-17-ին. ամռանը դրանց շնորհիվ գիշերները համեմատաբար զով են, և մեծանում է օդի ջերմաստիճանի օրական տատանման լայնույթը: Մթնոլորտի մրրկային (տուրբուլենտ) շարժման հետևանքով ՀՀ-ում քամու արագությունն ու ուղղությունը փոփոխական են: Բաց տեղանքում դրանց տարեկան միջին արագությունը, ըստ բարձրության, ավելանում է, հյուսիսարևելյան շրջաններում,Արարատյան գոգավորություններում և Զանգեզուրում այն 2մ/վ է, բարձրլեռնային շրջաններում, Շիրակի դաշտում և Արարատյան գոգավորությունում քամու առավելագույն արագություն դիտվում է ամռանը, Սևանի ավազանում, բարձրլեռնային և հյուսիսարևելյան շրջաններում ու լեռնանցքներում՝ ձմռանը: Օրվա ընթացքում առավելագույն արագությունը դիտվում է կեսօրին, նվազագույնը՝ առավոտյան, իսկ լեռնահովտային շրջանառության վայրերում՝ երեկոյան և գիշերը (Երևան, Եղվարդ և այլն): Ուժեղ քամիներով օրերի թիվը Մեղրիում 1 է, Գյումրիում՝ 84, Սիսիանի լեռնանցքում 134, և այլն: Հիմնականում լինում են ձմռանը՝ մթնոլորտային ցուրտ ճակատների ու ցիկլոնների անցման ժամանակ,և ամռանը՝ լեռնահովտային շրջանառության ակտիվ զարգացման պայմաններում: Քանի որ Հայաստանի Հանրապետությունը գտնվում է Հայկական լեռնաշխարհում, ապա աշխարհագրական մակրոդիրքի և մեզոդիրքի առումով այն կրկնում է Հակական լեռնաշխարհին:

Ընդունված է համաաշխարհագրական (մաթեմատիկաաշխարհագրական)դիրքից բացի տարբերել նաև ֆիզիկաաշխարհագրական դիրք, տնտեսաաշխարհագրական դիրք և քաղաքաաշխարհագրական (աշխարհաքաղաքական)դիրք: Ինչպես ցանկացած երկրի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքն ունի ինչպես նպաստավոր, այնպես էլ աննպաստ կողմեր: Մի դեպքում այն կարող է նպաստել երկրի տնտեսական ու քաղաքական զարգացմանը, մյուս դեպքում՝ խոչընդոտել այն: Խնդիրն այն է, որ ճիշտ ճանաչենք ու գնահատենք այդ առանձնահատկությունները և հաշվի առնենք պետության ներքին ու արտաքին քաղաքականությունն իրականացնելիս:

Այժմ պարզենք տնտեսաաշխարհագրական և քաղաքաաշխարհագրական դիրքի առանձնահատկությունները:

Տնտեսաաշխարհագրական դիրքը: Հայաստանի Հանրապետության տարածքը, հեռու գտնվելով ծովերից և նավարկելի լճագետային ուղիներից, զրկված է արտաքին հաղորդակցության՝ ներկայումս ամենաշահավետ ու էժան միջոցներից օգտվելու ուղղակի հնարավորությունից, ինչը բացասաբար է անդրադառնում, հատկապես՝ բեռնափոխադրումների ապահովության ու ծավալների մեծացման վրա:

Տնտեսաաշխարհագրական դիրքի մյուս բացասական իրողությունն այն է, որ Հայաստանի Հանրապետության տարածքը հեռու է տնտեսապես գերզարգացած և բարձր զարգացած պետություններից, որոնց հետ հազարավոր կմ հեռավորության կապն առավելապես իրականացվում է սահմանափակ հնարավորություններ ունեցող օդային հաղորդակցությամբ:

Մեր հանրապետությունը, չունենալով հանքային վառելիքի արդյունաբերական պաշարներ, ինչը որոշիչ դեր ունի յուրաքանչյուր երկրի տնտեսական հզորացման և առաջընթացի համար, հեռու է նաև հզոր տնտեսական շրջաններից, նավթի և բնական գազի ոչ միայն համաշխարհային, այլև՝ տարածաշրջանային նշանակություն ունեցող ավազաններից: Տնտեսաաշխարհագրական դիրքի նմանօրինակ անբարենպաստ իրավիճակը մեղմելուն են միտված Իրան-Հայաստան գազամուղի շինարարությունը, կանադական ընկերությունների երկրաբանական-որոնողական աշխատանքների կազմակերպումը, այլընտրանքային էներգակիրների օգտագործումը, նոր աէկի նախագծումը:

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է Ռուսաստանը և Վրաստանը Իրանին կապող ավտոմոբիլային, Հարավային Ասիան Արևելյան ու Կենտրոնական Եվրոպային կապող օդային ճանապարհների խաչմերուկում: Բանակցություններ են ընթանում, որ ամենամոտ ապագայում կառուցվի Իրան-Հայաստան երկաթուղի, ինչպես նաև՝ վերագործարկվի Վրաստանի տարածքով անցնող Հայաստան-Ռուսաստան երկաթուղային կապը: Լեռնոտության պատճառով՝ տարածքի 40%-ը պիտանի չէ տնտեսական կարիքների համար: Դիրքի ոչ նպաստավոր լինելը խորանում է նաև այն հանգամանքներով, որ Հայաստանի Հանրապետությունը Սևծովյան համագործակցության գոտում և Հարավային Կովկասում զբաղեցնում է

եզրային (ծայրամասային) դիրք, ունի անկանոն ձգված տարածք ու անհամաչափ լայ նակի (արևմուտքից արևելք) փռվածք՝ 200-250 կմ սահմաններում:

Քաղաքաաշխարհագրական դիրքը: Քաղաքաաշխարհագրական առումով՝ Հայաստանի Հանրապետությունը քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունած աշխարհում առաջին պետությունն է (301թ.) և գտնվում է արևմտյան (եվրոպական), արևելյան (ասիական) և հյուսիսային (սլավոնական) քաղաքակրթությունների փոխազդեցության ու մշակութային արժեքների շփման միջավայրում:

Մեր երկրի տարածքն իր անմիջական հարևան պետությունների հետ հայտնվել է Ռուսաստանի Դաշնության, ԱՄՆ-ի և Եվրամիության առաջատար պետությունների տնտեսաքաղաքական շահերի բախման կիզակետում, ինչը Հայաստանի Հանրապետության իշխանություններից պահանջում է բազմաբևեռ, հավասարակշռված արտաքին քաղաքականության իրականացում:

Տարածքը: Ըստ 1991թ. սեպտեմբերի 21-ին կայացած համաժողովրդական հանրաքվեի արդյունքների՝ նորովի կազմավորված Հայաստանի Հանրապետությունը զբաղեցնում է 29742 քառ. կմ մակերես: Այս ցուցանիշով մեր հանրապետությունն աշխարհի 196 անկախ պետությունների շարքում զբաղեցնում է 139-րդ տեղը և իր տարածքի չափերով գրեթե հավասար է Բելգիային, Ալբանիային, Հայիթիին և Լեսոտոյին, կրկնակի անգամ մեծ է Իսրայելից, ավելի քան երեք անգամ՝ Կիպրոսից:

Եղել են ժամանակներ, երբ հայկական պետությունն ունեցել է ավելի ընդարձակ սահմաններ: Հիշեք հայ ժողովրդի պատմության դասընթացից, որ դեռևս Ք.ա. 66թ. Մեծ Հայքի թագավորությունը Հայոց արքայից արքա Տիգրան Բ Մեծի օրոք զբաղեցրել է 316000 քառ. կմ մակերես:

Պետական սահմանները: Հայաստանի Հանրապետության պետական սահմանների ընդհանուր երկարությունը 1430կմ է: Հարավ-արևելքում մեր երկիրը սահմանակից է Իրանի Իսլամական հանրապետությանը:(42կմ) : Պետական սահմանն անցնում է Արաքս գետով, որի վրա կառուցվել է հարմարավետ կամուրջ:

Հյուսիսում Հայաստանի Հանրապետությունը սահմանակից է Վրաստանին (195կմ): Հայ-վրացական պետական սահմանը հատում է Ջավախքի լեռնավահանը, Լոռվա դաշտը և Վիրահայոց լեռնաշղթան:

Թուրքիայի հետ պետական սահմանը (280 կմ) ձգվում է մեր հանրապետության արևմուտքով, Եղնախաղի լեռնավահանի ջրբաժանով, Ախուրյան և Արաքս գետերով:Ախուրյան գետի վրա կառուցված ջրամբարը նախատեսված է երկկողմանի, համատեղ օգտագործման համար: Հայ-ադրբեջանական պետական սահմանն ամենաերկարն է: Կազմված է երկու հատվածից՝ արևելյան և հարավարևմտյան, որոնք անցնում են Վայքի, Զանգեզուրի ու Սևանի լեռնաշղթաների ջրբաժանով:

Եզրակացություն

Առաջին. լինելով ցամաքային պետություն,Հայաստանի Հանրապետությունը լիովին կտրված է ծովերից ու օվկիանոսներից և ուղղակիորեն չի կարող օգտվել դրանց հաղորդակցության ուղիներից և բնական հարստություններց։

Երկրորդ. համեմատաբար հեռու է աշխարհ բարձր զարգացած արդյունաբերական երկրներից ու հզոր տնտեսական կենտրոններից։

Հասկանալի է, որ հատկանիշը նույնպես, ինչպես և առաջինը, տնտեսության զարգացման տեսակետից աննպաստ հատկանիշ է։

Երրորդ. գտնվում է Եվրոպան Կենտրոնական ու Հարավային Ասիային և Ռուսաստանը Մերձավոր Արևելքին կապող միջազգային ուղիների խաչմերուկում։

Հայաստանի Հանրապետության տարածքով անցնում են Թուրքիան Իրանին, Ադրբեջանին ու Կասպից ծովի ավազանին, ինչպես նաև Հյուսիսային Կովկասը և Սև ծովը Իրանին ու արաբական երկրներին կապող երկաթուղիներն ու ավտոմոբիլային գլխավոր ճանապարհները։

Հարավային Կովկասով (և Հայաստանով) է անցնում Հարավ-արևելյան Ասիան և Կենտրոնական Ասիան Եվրոպային միացնող ցամաքային ճանապարհը, որը միջնադարի հռչակավոր <<Մետաքսի նոր ճանապարհ>> անունը։ Դրա զարգացմամբ շահագրգռված են ոչ միայն տարածաշրջանի երկրիները, այլև ԱՄՆ-ը և Արևմուտքի մյուս խոշոր տերությունները։

Սա Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքի առավել կարևոր դրական հատկանիշն է։ Բայց խորհրդային իշխանության տարիներին այդ հատկանիշն անբավարար է օգտագործվել, որովհետև Թուրքիայի և Իրանի սահմանը, որ ԽՍՀՄ պետական սահման էր, հիմնականում փակ էր հաղորդակցության և տնտեսական կապերի համար։ Խորհրդային Հայաստանին պարտադրվում էր միակողմանի՝ դեպի հյուսիս տանող տնտեսական կապեր։

Չորրորդ. Հայաստանի Հանրապետությունը ամբողջ Կովկասի և Մերձավոր Արևելքի հետ միասին գտնվում է Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Թուրքիայի ու Իրանի տնտեսական ու քաղաքական շահերի բախման ոլորտում։ Այստեղ իրենց շահերն ունեն նաև Արևմտյան Եվրոպայի երկրները։

Հինգերորդ. Հայաստանի Հանրապետությունը (Վրաստանի հետ միասին) գտնվում է երեք համաշխարհային քաղաքակրթությունների՝ եվրոպական, արևելյան և սլավոնական քաղաքակրթությունների փոխազդեցության գոտում։

Այս ամենի, ինչպես նաև Մերձավոր Արևելքի մի շարք պետությունների միջև եղած անհաշտ հակասությունների պատճառով ամբողջ տարածաշրջանում առկա է քաղաքական անկայունություն, որը լրացուցիչ դժվարություն է ստեղծում նաև Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման համար։

ՑԱՆԿ

1. Հայաստանի աշխարհագրություն- Երևան <<Լույս>> 1999 թ.
   Հեղ.- Խաչիկ Նազարյան, Լեմվել Վալեսյան

2. Հայաստանի աշխարհագրություն – Երևան <<Արևիկ>> 2000թ.
   Հեղ. – Աշոտ Խոյեցյան, Գագիկ Մկրտչյան
3. Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն – Երևան 1971թ.
   Հեղ. – Ա. Բ. Բաղդասարյան
   Գ. Ս. Աբրահամյան
   Գ. Ս. Ալեքսանյան
   Լ. Ն. Զոհրաբյան